

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԿԱՍՏԻԵԱՆ, ԵՌԱՍՏԻԵԱՆ ԿՐԹԱԿԱԾԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՋ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
(ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)\***

### **Արպատ Ավանեսյան, Գրիշա Հարությունյան**

**Քամալի բառեր**՝ Երկաստիճան, Եռաստիճան կրթահամակարգ, հոչակագիր, Եվրոպական բարձրագույն կրթության տարածք, մասնագիտական և հանրային գործունեություն, շարունակական կրթություն:

Յուրաքանչյուր երկրի համար կարևոր բնագավառ է կրթության ոլորտը, որը պետության սոցիալ-տնտեսական, բանհմաց հասարակության, ուսանողների ու շրջանավարտների ապագան կանխորոշելու և ռազմավարական զարգացման երաշխիքն է: Յուրաքանչյուր պետության գերխնդիրն է ունենալ ամուր կրթական համակարգ, որը հենասյունային դեր է խաղում պետության զարգացման գործում:

Այս ընդհանուր նպատակներից ելնելով Եվրոպան միավորվեց մեկ գաղափարի շուրջ և ստեղծեց Եվրոպական կրթական համակարգ, որը կապահովի մատչելիություն և շարժունակություն Եվրոպական կրթական համակարգում:

Այսպես՝ 1998թ. մայիսի 25-ին ընդունվեց Սորորոնի հոչակագիրը, որի նպատակն էր ստեղծել «Գիտելիքի Եվրոպա», որտեղ բարձրագույն կրթական համակարգը կլինիք ներդաշնակ և համարելի: Այն այժմ ճանաչվում է որպես սոցիալ հասարակական զարգացման անփոխարինելի գործոն, ինչպես նաև Եվրոպական քաղաքակրթության զարգացման և համախմբման կարևոր քաղադրիչ հարավորություն տալով մարդկանց դիմակայելու նոր հազարամյակի մարտահրավերներին:

Սորորոնի հոչակագիր դրույթները հիմք ընդունելով 1999թ. հունիսի 19-ին հտակայի Բոլոնիա քաղաքում 29 երկրների կրթության նախարարները հանդիպեցին և, Սորորոնի հոչակագիր դրույթներին համաձայն, ստորագրեցին Բոլոնիայի հոչակագիրը, ըստ որի մինչև 2010թ. անհրաժեշտ է ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթական տարածք:

Այսուհետ Բոլոնիայի հոչակագիրը պատմության մեջ մտավ որպես Բոլոնիայի գործնքաց անվանմամբ, որի խնդիրներից է վերացնել ուսանողների շարժունակության խոչընդոտները, ստեղծել Եվրոպայում բարձրագույն կրթության ընդհանուր կառուցվածք, որը կիրանակ երկաստիճան համակարգի վրա:

Այսինքն 47 երկրների քաղաքացիները դարձնում են մեկ ընտանիքի անդամ, որոնք ունեն նոյն հարավորությունները և որպակապումները՝ անընդհատ փոփոխվող հագարանյակի մարտահրավերներին դիմակայելու համար:

Այսօր Բոլոնիայի գործընթացը ներառում է 47 անդամ երկիր, որոնք պատրաստակամություն են հայտնել ի կատար ածելու Բոլոնիայի բոլոր սկզբունքները:

Տարեցտարի այն ընդլայնում է իր աշխարհագրությունը՝ դառնալով ավելի ընդգրկում և արդյունավետ:

Ինչպես նշել ենք, Եվրոպական կրթական տարածքին Հայաստանի անդամակցությունը, իրոք որ կարելի է անվանել պատմական հեղաշրջում: Հետխորհրդային տարիներից հետո ՀՀ կրթական համակարգը այնքան էր խարիսկվել, որ այս փոփոխությունը

\* Հոդվածն ընդունվել է 15.02.2019:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

պարզապես անհրաժեշտ էր. այն լայն հնարավորություններ է ընձեռում մի կողմից բարեփոխելու հայկական կրթական համակարգը՝ դարձնելով այն ճանաչելի և համադրելի եվրոպական համակարգերի հետ, մյուս կողմից՝ Բոլոնյան սկզբունքները ընդունելով՝ Յայաստանը արագել պատասխանատու է դառնում համաշխարհային շուկայի փոփոխվող պահանջներին, զարգացնում մրցունակությունը, որը կայուն, գիտելիքահեն հասարակության և նորարար տնտեսության գրավականն է:

Ավելի քան տասը տարվա ընթացքում իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին լուծելու ՀՀ և ԼՂՀ կրթական համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու առկա իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար:

Այդուհանդերձ, կրթության համակարգը դեռևս հեռու է իր առաքելության լիարժեք և ամբողջական իրականացումից, մինչդեռ առաջ են եկել նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարմանը է պայմանավորված կրթության հետագա ապագան:

Բարեփոխումների՝ շշշափելի և հասարակության կողմից արժևորվող ձեռքբերումների բացակայության պատճառով կրթության համակարգը հայտնվել է մի հրավիժակում, երբ խաթարված է կրթական հաստատությունների հեղինակությունը, (1991-1993թ), վտանգված է վստահությունը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ: Յայաստանի Յանրապետության և ԼՂՀ կրթական ոլորտի զարգացման տեմպերը և բարեփոխումների հաջորդությունը մեծապես կախված են կառավարման օդակների առաջնորդելու ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունից[1]:

Բոլորին իրավագիրն ի սկզբանե ենթադրում էր բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի հիմնում: Բոլորին իրավագիրն ընդունելուց հետո անդամ երկրների նախարարները 2003թ. Բերլինի գագաթնաժողովին անհրաժեշտ համարեցին բարձրագույն կրթության երկաստիճան համակարգին ներառել դրկտորական մակարդակը որպես Բոլորին համակարգի երրորդ աստիճան: Նրանք շեշտը դրեցին հետագոտական աշխատանքների, ինչպես նաև բարձրագույն կրթության որակի զարգացման և ընդհանրապես եվրոպական բարձրագույն կրթության նորունակության բարձրացման վրա:[2] Յիրավի, կարելի է արձանագրել, որ երկաստիճան կրթական համակարգի ներդրումը արմատապես տարանջատում է բարձրագույն կրթությունը՝ բակալավրիական և մագիստրոսական ուսուցմամբ, սակայն, դժբախտաբար, փաստում ենք և փորձն էլ ցույց է տալիս, որ, սկսած 1999թ-ից, անցումը երկաստիճան համակարգից եռաստիճան համակարգի առաջացրել է բավականին շատ հակասություններ, քանի որ այն հաճախ ստեղծվում է նախկին <<երկարատև>> աստիճանի խտացման կամ մեխանիկական երկատման ճամապարհով, այդ իսկ պատճառով դեռևս չի վայելում ուսանողների և գործառուների անհրաժեշտ վստահությունը: Ինչպես նաև կրթության բարեփոխումները կատարվել են որդեգրելով եվրոպական համակարգի ընդամենը մակերեսային կաղապարը, այսինքն տրոհվել է կրթական համակարգը նախկին 5 տարին դարձել է չորս և երկու համապատասխանաբար բակալավրիատ և մագիստրատուրա: Դա հետևանքով առաջացած բովանդակային խառնաշփոթը, հոգեբանական և սոցիալական բնույթի արգելքները պայմանավորված են եղել կրթական արդյունավետ մողել ծևավորելու նպատակադրության բացակայությամբ: Դա իր հերթին չի ենթադրել բարեփոխումների լուրջ հայեցակարգ և այդ ուղղությամբ համապատասխան հետազոտական և վերլուծական աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն:

Առկա են տարածայնություններ նաև առաջին և երկրորդ աստիճանների տևողության վերաբերյալ՝ բակալավրի որակավորման համար 3 կամ 4 տարի, իսկ մագիստրոսի որակավորման համար՝ 1-ից 2 տարի: Այս և այլ խնդիրները բարեփոխումների ընթացքում հետագայում պարարտ հող կդառնան ավելի խորը և դժվարանցանելի խոչընդոտմեր հաղթահարելու համար:

Երկաստիճան կրթական համակարգի ներմուծումը միևնույն ժամանակ ենթադրում է անցուն այսպես կոչված դասախոսակենտրոն մոտեցումից (երբ կրթական գործներացի գլխավոր դերակատարը դասախոսն է) դեպի ուսանողամետ կողմնորոշում, որի առանցքն է ուսանողը, ում պետք է հնարավորինս նախապատրաստել իր ապագա

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

մասնագիտական և հանրային գործունեությանը[3]:

Եվ այսպիսով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարը 2005 թ. մայիսի 19-ին ստորագրեց Բներգեմի կոմյունիկեն և Հայաստանը պաշտոնապես դարձավ Բոլոնիայի գործընթացի անդամ Երկիր պարտավորվելով մինչև 2010թ. Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացում ըստ գործողությունների առանձին ուղղությունների:

ԵԲԿՏ-ին ինտեգրումը այնքան էլ դյուրին գործ չէ, քանզի այն ենթադրում է կատարել արմատական փոփոխություններ ՀՀ բարձրագույն կրթական համակարգում, որոնք համապատասխան վկինեն Բոլոնիայի գործընթացի պահանջներին: Իսկ սա նշանակում է ներմուծել համընթեռների և համենատելի որակավորումների եռաստիճան համակարգ, անցում կատարել ուսուցման կրեդիտային համակարգին խթանելով ուսանողների և դասախոսների անարգել ակադեմիական շարժունակությունը, արմատավորել որակի զնահատման և ապահովման եվլուպական չափանիշներ, նախադրյալներ ստեղծել հայատև կրթության համակարգի ծևավորմանն ու զարգացմանը, որոնք կապահովեին բուհերում կրթական և գիտական գործընթացների միահյուսումը: Վերոնշյալ փոփոխությունները կնպաստեն ԵՊԿՏ-ին Հայաստանի լիարժեք մասնակցությանը: [4]

Նախքան Բոլոնիայի գործընթացի ի հայտ գալը՝ Հայաստանի Հանրապետությունում ՀՊՀ-ում, 1992թ. առաջին անգամ ներդրվեց նմանատիպ երկաստիճան համակարգ, իսկ արդեն 1994թ. սկսեց գործել երրորդ աստիճանը՝ ասպիրանտուրան դառնալով եռաստիճան համակարգի նախատիպ:

Այժմ ներկայացնենք երկաստիճան և եռաստիճան կրթական համակարգը՝ ԼՂՅ - բուհերի համեմատական վերլուծության օրինակով:

Լեռնային Դարաբաղի Հանրապետությունում բուհերը (ԱրՊՃ,ԳՆՀ, ՍՄՀ և Շուշիի տեխնոլոգիական համալսարան) իրականացնում են միջին (քոլեջ), բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության և հիմնական կրթության ծրագրեր՝ կրտսեր մասնագիտական, բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի (ասպիրանտուրա) որակավորման աստիճանների շնորհմանք: Համալսարաններն առաջատար դերակառարություն ունեն Հայաստանում և ԼՂՅ-ում բարձրագույն կրթության բարեփոխումների ընթացքում:

Արցախի պետական համալսարանն առաջինն էր հանրապետությունում, որ ներդրեց բարձրագույն կրթության երկաստիճան, ապա՝ եռաստիճան համակարգերը, իսկ այնուհետև հաջողությամբ փորձարկում է կրետդիտների կուտակման և փոխանցման Հայաստանի բուհերի համակարգը՝ Բոլոնիայի գործընթացի զարգացումներին համապատասխան:

Հարկ է նշել, որ Հայաստանի և Արցախի բուհերի (պետական և ոչ պետական) նախաձեռնած հաջող կրթափորձն արժանացավ ՀՀ կառավարության հավանությանը և որոշվեց իրականացնել ԼՂ Հանրապետության բուհական համակարգի անցում կրթական երկաստիճան կառուցվածքին (Հայաստանում 1995 թվականից, Արցախում 2002 թվականից[5]) բակալավրիատ, մագիստրատուրա: Հայաստանի բուհերի փորձն ունեցավ համակարգային նշանակություն, և դրանց օրինակին հետևեցին այլ բուհեր (ԵՊՃ, ՀՊՄՀ, Հ.Գյուղ. ակադեմիա, ՀՊՃ, Եր. Լեզվաբանական համալսարան): Հետազայում այս գործընթացը դադարեց և միայն 2003 թվականին գաղափարը վերակենդանացավ.

Ազգային ժողովում քննարկվող բարձրագույն և հետքուհական կրթության մասին օրենքի նախագծում նախատեսվում է Հայաստանի և Արցախի բուհերի պարտադիր անցում երկաստիճան համակարգի սկսած 2005 թվականից: Բարեփոխումները հիմնականում օրենսդրական կարգավորման ու կանոնակարգման բնույթ են կրել:

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում կարևորագույն արդյունքներն են եղել անցումը երկաստիճան համակարգին, ինչպես նաև բուհական մասնագիտությունների չափորոշչների մշակումը: Այդ տեսանկյունով էլ բարձրագույն կրթության բարեփոխումներն առաջնահերթ են դարձում միջազգային կառույցներին ինտեգրումը, այդ կառույցներին համապատասխան կրթական համակարգի ծևավորումը, որը

## ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Դյուրիհն կդարձնի մասնագետների շարժունությունը և կրթության որակի միասնացումը: Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին ինտեգրումը նախ և առաջ ենթադրում է ոչ միայն ազգային-կրթական համակարգերի գույն միավորում, այլև փոխանակելի միասնական գործընթացների իրականացում:

Նամաշխարհային գործընթացներում ներկայում ընթացող գորալացումը՝ որպես օրյեկտիվ իրականություն, բարձրագույն կրթության ազգային համակարգերից պահանջում է համամարդկային արժեքներով հիմնված միջազգային համագործակցության նպատակային նոր խնդիրների իրագործում: Կրթության որակի բարելավումը համաշխարհային մակարդակի հիմնախնդիրն է, քանի որ պահանջում է յուրահատուկ գործիքակազմի կիրառում, կրթության որակի վերահսկողության, գիտելիքների ստուգման ու գնահատման տեխնոլոգիաների ներդրում, տարրեր երկների բուհերում որակի ապահովման հասկանալի և փոխընդունելի գործընթացների վարում: Այս խնդիրների լուծման միակ ճանապարհը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքային ինտեգրումն է, որին Նայաստանը անդամագրվել է 2005 թվականին[6]:

Ինչպես արդեն նշվեց, Նայաստանը Բոլոնիայի գործընթացին է միացել Եվրոպական երկների կրթության նախարարների՝ 2005թ. մայիսի 20-ին Բերգենում կայացած գագարնաժողովին: Միանալով Բոլոնիայի գործընթացին Նայաստանը սկսեց իրականացնել ինչպես կրթական համակարգի, այնպես էլ գիտահետազոտական ոլորտում իրականացվող աստիճանաշնորհումների բարեփոխումները:

Բոլոնիայի գործընթացի իրականացումը (Նայաստանում և Արցախում) հնարավորություններ է ընծառում իրականացնելու կրթության երկաստիճան համակարգի (բակալավրիատ, մագիստրատուրա) ձևավորում, կրթական ծրագրերի կազմում և ուսանողների շարժունության ոլորտում միջբուհական համագործակցության սերտածում, բուհերում մասնագիտական կրթական ծառայությունների իրականացմանը գուգահեռ գիտահետազոտական կառույցների ստեղծում և այլն:

Եվրոպական կրթական համակարգին Նայաստանի ինտեգրումը թույլ է տալիս իրականացնել փոխանակման ծրագրեր՝ ներմուծելով կրթական առաջավոր տեխնոլոգիաներ, նորանուծություններ, որոնք կիսանեն կրթության զարգացումը: Նայաստանի և ԼՂՀ բուհերի կողմից տրված դիպլոմները փոխանակածների են դարնում Եվրոպայում, միաժամանակ փոխանակած դիպլոմները հնարավորություն կտան հաղթահարելու գործառուի արգելվածներն աշխատանքի Եվրոպական շուկայում: Բոլոնիայի հոչակագրով ստեղծվում են համեմատելի կրթական աստիճանների համակարգ, դիպլոմի միասնական ակադեմիական հավելված, ձևավորվում է գիտելիքների կուտակման և փոխանցման կրեդիտային համակարգ:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, 2002 թվականից սկսած Արցախի պետական համալսարանում գործում է եռաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) կրթական համակարգ, իսկ պետհակատարմագրված բուհերում երկաստիճան կրթական համակարգը («Գրիգոր Նարեկացի», «Մեսրոպ Մաշտոց» համալսարաններում) 2005 թվականից: Առաջին աստիճանը՝ բակալավրիատի ուսումնական ծրագրերը, 4-ամյա ուսումնառությամբ, կազմակերպված են ըստ մասնագիտությունների և իրականացնում են 32 բնագիտական և հումանիտար ուղղություններով, իսկ ոչ պետական բուհերում 8 մասնագիտական ուղղություններով: Նորաստեղծ Շուշիի տեխնոլոգիական համալսարանում գործում է երկաստիճան կրթական համակարգ (բակալավրիատ և մագիստրատուրա):

ԱրՊԴ-ում երկաստիճան համակարգի ծրագրերը կազմված են 12 տարրեր մասնագիտությունների և մասնագիտացումների, երրորդ աստիճանը (ասպիրանտուրա) նպատակաւողված է հումանիտար և բնագիտական տարրեր մասնագիտությունների գծով որակյալ գիտանակավարժական կադրերի պատրաստմանը: Բոլոր աստիճանների համար նախատեսված կրթական ծրագրերը ներառում են հանրակրթական (պարտադիր և ընտրովի) ընդհանուր և հատուկ մասնագիտական, տեսական ու գործնական բնույթի դասընթացներ:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Արցախի բուհերի երկաստիճան կրթական համակարգում կրթության անհրաժեշտ քարեփոխումների հիմնական ուղղությունների շարքում կարևորվում են հետևյալը.

- ուսանողների և դասախոսների շարժունակության ապահովում,
- բարձրագույն կրթության որակի ապահովման գործում եվրոպական չափանիշների ընդունում,
- եվրոպական բարձրագույն կրթության գրավչության բարձրացում:

Բարձրագույն կրթության գերակա խնդիրների շարքում առանձնահատուկ կարևորվեց նաև աշխատաշուկայի կարիքներին և հետագա ուսումնասիրության շարունակությունը՝ միտված որակավորումների ապահովմանը: Այս խնդիրների արդյունավետ լուծման համար պահանջվեց տարամջատել մասնագիտության ծրագրային բովանդակությունը կրթության երեք աստիճանների՝ բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի նաև կարդանակներում: Այս տարանջատումը հնարավորություն է ստեղծել միաժամանակ ապահովելու նաև իրարահաջորդ այդ աստիճանների ինքնուրույն ելքը դեպի աշխատաշուկա: Այսպիսով բարձրագույն կրթության յուրաքանչյուր աստիճանի համար կարևորվեց ելքային կրթական արդյունքների հիման վրա կարուցված որակավորումների եվրոպական համբողիանուր շրջանակների ընդունումը: Վերջինիս հիման վրա կազմվեցին որակավորումների ազգային շրջանակներ՝ կրթության ոլորտների յուրաքանչյուր մասնագիտության համար:

Վերը նշված բարեփոխումների իրականացմանը նպաստող կարևորագույն խնդիրներից են.

1. Ուսանողների ու դասախոսների երկրից երկիր և բուհից բուհ անարգել շարժունակության ապահովումը, ուսումնական նպաստների, կրթաթոշակների և ուսումնական վարկերի միջավետական տեղափոխման հնարավորությունը, որակավորումների շրջանակների զարգացումն ու կրթության որակի հավաստումը, անձի իմացական զարգացման ապահովումը, անհատների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև միջազգային համագործակցության անդապնդումը, կրթության որակի ապահովումը և գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացումը:

2. Միջազգային շարժունությունը Յայաստանի բուհերից և դեպի Յայաստանի բուհեր դեռևս պահանջափառ բնույթ չի կրում և չի համակարգում է: Այս գործընթացի զարգացումը խոչընդունող հիմնական գործուներից են շարժունության և փոխանակման եվրոպական գործիքների՝ կրեդիտների կուտակման և փոխանակման եվրոպական համակարգի (EGTS) ու դիպլոմի (Վկայագրի) եվրոպական հավելվածի ոչ լիարժեք կիրառումը, մասնագիտությունների որակավերման ազգային շրջանակների և որակավորման եվրոպական համբողիանուր շրջանակի որոշակի անհամապատասխանությունը, բուհերի նվազ մասնակցությունը շարժունության ընդլայնմանը նպաստող եվրոպական ծրագրերին (Socrates Erasmus, Erasmus Mundus և այլն), պետական աջակցման դրամաշնորհային ծրագրերի սակավությունը:

3. Ուսանողների և դասախոսների միջազգային շարժունության ակտիվացման կարևոր խթան կարող է հանդիսանալ եվրամիության անդամ չիանդիսացող երկրների և Յայաստանի բուհերի միջև տարբեր միավորումների (կոնսորցիումների) ստեղծումը, ինչպես նաև երկկողման համագործակցության զարգացումը, ինչը կօժանդակի այդ երկրների կրթական համակարգերի առաջավոր փորձի փոխանակմանը:

4. Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցացիայի կողմից մշակված որակի ապահովման եվրոպական ստանդարտները և ուղենիշները նախատեսված են բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության և մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման ընթացքը գնահատելու (ինքնավերլուծություն կատարելու) և բարելավման կարիք ունեցող ոլորտներում անհրաժեշտ փոփոխությունների իրականացմելու համար և այլն:

Յայաստանի և Արցախի կրթության և գիտության նախարարությունների կողմից հավանության է արժանացել՝ ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային համակարգի ձևավորման և բուհերում անհրաժեշտ բարեփոխումների ռազմավա-

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

բության հայեցակարգային հիմնադրույթները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանի և ԼՂՀ բուհերի կառուցվածքում, հիմնակամում 2007-2008թ-ին է սկսվել Եվրոպական չափանիշներով գործող կրթության որակի ներքին ապահովման ներքուհական համակարգերի ստեղծումը, սակայն առանձին բուհեր՝ ԵՊՃ, ՅՊԾՃ, ԵՊՄ և ուրիշներ, որակի ապահովման իրենց ներքին համակարգերի գործունեության արդյունավետության բարձրացման խնդիրներում արդեն ունեն որոշակի առաջընթաց: Այդ են վկայում ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձարկման շրջանակներում Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում առաջինը ԵՊՃ-ում, փորձագիտական խմբերի կողմից 2011թ. իրականացված ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման փորձարկման արդյունքները:

Քննարկվող հարցին առնչվող գիտական գրականության և այլ աղբյուրների ուսումնասիրումը ցույց է տվել որ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ամրապնդման և Եվրոպական բարձրագույն կրթությունն աշխարհին ավելի գրավիչ դարձնելու գործընթացներում նկատվող առաջընթացը: Այս խնդիրների իրականացման կարևոր գործուների շարքին են դասվում փոխընդունելի կրթական ծրագրերը, միջազգային շարժունությունը, տարրեր աշխարհամասերից, այդ թվում նաև Բոլոնիայի գործմիացման չամրամակցող երկրներից, ուսանողների հավաքագրումը, ինչպես նաև ուսանողների աջակցման սոցիալական բաղադրիչի առկայությունը, մասնագիտությունների փոխանակումը, միջրուհական գործարար համագործակցությունը, բուհերում օտար լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն և այլն) ուսուցման կազմակերպումը (ԵՊՃ, ԵՊԲՃ, ԵՊԾՃ, ԵՊՃՃ և այլ աղբյուրների օրինակով):

Հայաստանի կրթական համակարգի ակտիվ ներգրավումը և արդյունավետ մասնակցությունը ԵԲԿՏ-ի ռազմավարական խնդիրների իրականացման, հատկապես որակավորումների փոխանակումն առաջարկությունը, մասնագիտությունների փոխանակումը, միջրուհական գործարար համագործակցությունը, բուհերում օտար լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն և այլն) ուսուցման կազմակերպումը (ԵՊՃ, ԵՊԲՃ, ԵՊԾՃ, ԵՊՃՃ և այլ աղբյուրների օրինակով):

Այս տեսանկյունով վերը նշված խնդիրների իրականացման միտումով առաջարկում ենք:

ա) Հայաստանի բարձրագույն կրթության արտաքին առաջարկի, ուսուցման գիտամանկավարժական ներուժի, հասարակական բարենպաստ միջավայրի (ընդունում, ուսուցում, կենցաղային պայմաններ, հանդուրժողական մեթոդներ, անհրաժեշտ ռեսուրսներ և այլն) և միասնական տեղեկատվական համակարգի բազա:

բ) Հայաստանի բուհերի դասախոսների օտար լեզվով վերապատրաստման նպատակային ծրագրեր և միջրուհական մասնագիտացված կենտրոններ:

գ) Արտասահմանյան ուսանողների բարձրագույն կրթության ծրագրերի և մասնագիտությունների ուսումնասիրությունների իրականացումը ապահովող մեխանիզմներ:

դ) Հայաստանում սովորող արտասահմանցի ուսանողների ուսուցման, կենցաղային և սոցիալական պայմանների բարելավում:

ե) Տեղեկատվության, կրթական տեխնոլոգիաների և առաջավոր փորձի տարածման, երկլողնյա շարժունության, համատեղ կրթական ծրագրերի իրականացման և Եվրոպական բուհերի հետ ուսումնական համագործակցության ընդլայնման հնարավություն:

Այսպիսով Բոլոնիայի գործընթացը ԵԲԿՏ երկրներին մարտահրավեր է ներկայացնում. առաջիկա տասնամյակում ուղիներ որոնել այլընտրանքային կրթական համակարգ ընդգրկելու բուհական ոլորտ: Մեր կարծիքով այն նպատակ ունի լուծելու մի շարք խնդիրներ:

Առաջին աջակցելու անհատին համեմատաբար աշխատանքային և ֆինանսական սակավ լարվածությամբ ծեռք բերելու նոր մասնագիտություններ, մասնագիտացումներ:

Այլընտրանքային կրթական արդյունքները ճանաչելի դարձնելով բուհերի համար՝

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

պայմաններ են ստեղծվում ողջ կյանքի ընթացքում կրթության անընդհատության համար՝ սովորողի մոտ հավատ ներշնչելով, որ որակավորման թրեմինգ կենտրոնում ստացած հմտությունները ոչ միայն բարելավում են աշխատաշուկայում իր դիրքերը, այլև դրանց ամրագրված կրեդիտները նպաստում են իր հետագա համալսարանական ուսումնառությանը կրթական պելի բարձր աստիճան մուտք գործելիս:

Երկրորդ այլընտրանքային կրթական ծառայությունների արդյունքների մոդուլավորման և ակադեմիական կրեդիտներով ամրագրման պարագայում էապես բարձրանում է վերապատրաստման դասընթացների որակը, քանի որ թրեմինգ կենտրոնները գտնվում են որակի հավաստման պետական ծառայությունների վերահսկողության ներքո:

Եվ վերջապես՝ պետությունը պետք է լուծի կրթական ծառայությունների վրա ծախսվող ռեսուրսների արդյունավետության հարցը, որակավորման ծկուն համակարգերի կիրառման, ինչպես նաև այլընտրանքային ուսումնառության ընթացքում ծեռք բերված ակադեմիական կրեդիտների բոլի տեղափոխման ծանապարհով համարավորինս բեռնաթափելով ուսանողի համալսարանական ծանրաբեռնվածությունը:

Կրթական բարեփոխումների ընթացքը Դայաստանի և Արցախի բուհական համակարգում պայմանավորված է աշխատուժի շուկայում, ինչպես նաև համալսարանական միջավայրում տեղի ունեցող հարաշարժ փոփոխություններով:

Ներկայումս ծևավորվել է մեկ իրավիճակ, երբ բարձրագույն կրթությամբ շրջանավարտների մասնագիտական հմտություններն ու կարողություններն արագորեն «հնամում են» և չեն բավարարում գործատուների պահանջներին: Համալսարանական պահանջական կրթությունը, որն արևնվազն չորս տարով է իրականացվում, ինդիք ունի ժամանակին արծագանքելու գիտելիքահենք տնտեսության առաջնորդացի պահանջների բավարարմանը: Նետևաբար պահանջարար «Էլիտար» համարվող համալսարանական կրթությունը զարգացած երկրներում հետզհետե ընդգրկում է ակադեմիական ծկուն համակարգեր՝ մեծացնելով կրթական ծառայությունների գրավչության աստիճանը, հնարավորություն ստեղծելով անհատի մեջ զարգացնելու ինչպես կարիերայի ծևավորման ուղիների բազմազանություն, այնպես էլ մրցակցային աշխատաշուկայում արագ կողմնորոշվելու և վերապատրաստվելու ունակություն: Այդ ամենն իրականացվում է շարունակական կրթության համակարգի կիրարկման պայմաններում:

Ինչպես նշել ենք, բարձրագույն կրթության բարեփոխումների երկրորդ փուլում Դայաստանում և Արցախում շարունակական կրթությունը՝ բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա, ընկալվում է ոչ ամբողջական համատեքսուով: Այս ընդունենք դիտվում է որպես անհատի կրթություն ողջ կյանքի ընթացքում (կիրավուում են նաև «մեծահասակների կրթություն», «հարատև կրթություն» տերմինները): Սակայն շարունակական կրթության գործառույթներն առավել խորբային են, որոնք ուղիներ են առաջարկում փոխելու բարձրագույն կրթության նկատմամբ բոլոր ավանդական մոտեցումները և խնդրու առարկա են դարձնում գործընկերային հարաբերությունները պետական և ոչ պետական կրթական ծառայություններ մատուցողների, ուսումնական կենտրոնների հետ զարգացնելը:

Եվորպայում առկա համալսարանական մշակույթը հուշում է, որ բարձրագույն կրթությունը վաղուց դադարել է «Էլիտար» լինելուց: Արևոտքում հասարակական ծեռքբերում է համարվում ոչ միայն որակյալ համալսարաններ ունենալը, այլ թրեմինգ կենտրոնների, վերապատրաստման դպրոցների լայն ցանցի օգնությամբ մասնագիտական կրթության մասսայականացումը: Եվ պատահական չէ, որ վերջին տասնամյակում իր զարգացումն ապրող Բոլոնիայի գործընթացի մի շարք փաստաթղթերում խնդիր է դրվում, որ բուհերն իրենց ավանդական ուսումնական ծրագրերի վերամշակման ընթացքում առաջնայնություն տան շարունակական կրթությանը և այս հիմնահարցը հանդիս հաստատությունների ռազմավարական զարգացման կենտրոնական, էական տարրերից մեկը: Սակայն անգամ համալսարանական հարուստ ավանդույթներ ունեցող եվրոպական երկրներում համակարգված շարունակական կրթությունը դժվա-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՍՈՅՑ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

րությունների է համույթում:

Այդ ուղղությամբ կատարած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շարունակական եռաստիճան կրթության համակարգային կիրառման հիմնական խոչընդոտը տարբեր ուսումնական հաստատությունների միջև փոխվաստակության պակասն է՝ որպայլ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացում:

Շարունակական կրթությունը հիմնականում երկու առաքելություն ունի: Առաջին, երբ վերապատրաստում է անհատին աշխատաշուկայի կողմից առաջադրվող նոր պահանջներին համապատասխան (երեմն այն համարում են նաև «մեծահասակների կրթություն») և երկրորդ, որը ոչ պակաս կարևոր է, նպաստում է մասնագիտական կրթության հաջորդականության գործընթացին:

Փորձը ցույց է տալիս, որ առավել արդյունավետ է գործում շարունակական կրթության առաջին առաքելությունը, երբ մասնագետը մասնակցում է կարճաժամկետ որակավորման դասընթացների (թրեյնինգների):

Գործառուներն այս դեպքում նույնպես շահագրգիռ են առավել կարճաժողությունը և ծրագրերի արդյունքում որակավորված աշխատուժ ունենալու: Դրան հակառակ՝ դեռևս դանդաղում է շարունակական կրթության ենթրումը՝ կրթության հաջորդականություն ապահովող և բարձրագույն մասնագիտություն ստացող ուսանողի անհատական հետազիջը ծևավորող իր գործառույթներով: Պատճառը նախորդող կրթության համակարգում կուտակված կրեդիտների փոխանաշումն է և կրթական հաստատությունների միջև փոխվաստակության բացակայությունը:

Այսպիսով՝ Յայաստանում և Արցախում շարունակական կրթությունը՝ որպես մասնագետի որակավորման գործառույթ, կրթառություն է հիմնականում 1-ին և 4-րդ «երթուղով», երբ հանրակրթական դպրոցի շրջանավարտն ընդունվում է համալսարան, սովորելու ընթացքում կուտակում ակադեմիական կրեդիտներ, ստանում բակալավրի և այնուհետև մագիստրոսի կրթական աստիճան: Փաստորեն, կրթական փուլերի նման հաջորդականությունը չի ենթադրում ուսումնառության ընթացքում կուտակված կրեդիտների փոխանաշումը և փոխանաշումն: Նման իրավիճակում որոշակիորեն խաթարվում է անհատի ուսումնառության ակադեմիական ծկունությունը, քանի որ յուրաքանչյուր համալսարան, յուրովի «մեկուսանալով» կրեդիտների կուտակման գործընթացում, ծանաչում է միայն «սեփական կրթական ծառայությունների արդյունքը»:

Որպես ընդհանրացում, նշենք, որ Յայաստանում և Արցախում ուսումնական հաստատությունների փոխանաշման մինուրուտում ակադեմիական կրեդիտների փոխանացումը ժամանակակից կրթական համակարգի արդյունավետ կազմակերպման առաջնահերթություններից է: Այն ենթադրում է ինչպես ուսանողի ակադեմիական ազատությունների շրջանակի հնարավորինս ընդլայնում, այնպես էլ մատուցվող կրթական ծառայությունների օպտիմալացում: Այսպես՝ միջազգային պրակտիկայում համալսարանները փորձում են ինչ-որ չափով բեռնաբակվել մատուցվող կրթական ծառայությունների շրջանակից՝ ընդունելով ուսանողների թրեյնինգ կենտրոններում նախօրոք ծեռք բերած ակադեմիական կրեդիտները: Այսինքն կրթության կազմակերպման տեսակետից արդյունավետ է համարվում արտահամալսարանական կառույցներից փոխանաշման կրեդիտների ընդունումը բուհի կողմից, որտեղ ուսանողը, ի վերջո, ավարտում է իր բարձրագույն կրթությունը և ստանում ավարտական դիպլոմ:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ հարկ է նշել, որ հանրակրթության, ինչպես նաև բարձրագույն կրթության զարգացումը Յայաստանում և Արցախում ունի որոշիչ նշանակություն: Այն պայմանավորում է հասարակության և ընդհանրապես համաշխարհային զարգացման առաջընթացը, որն ընթանում է հետևյալ ուղղություններով:

- հասարակության զարգացման տեմպերի արագացում, որն արդյունք է մարդու պատրաստվածության կյանքի հարակիտին պայմաններին,
- մասնագիտական բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող աշխատակիցների պահանջարկի բարձրացում,
- հանրակրթության և բարձրագույն ուսումնական հաստատություններում ժո-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

ղովրդավարացում, ընտրության հնարավորությունների ընդլայնում, ինչն էլ իր հերթին առաջ է քաշում քաղաքացիների գիտակցական ընտրության բարձր պատրաստվածության անհրաժեշտություն,

- զլրաբ խնդիրների ծագում և աճ, որոնք կարող են լուծվել միայն համագործակցության արդյունքում՝ միջազգային համագործակցության շրջանակներում, ինչն էլ պահանջում է արժեքային աշխարհայացքի ծևավորում երիտասարդ սերնդի մոտ:

Մարա են միտված Յայաստանում և Արցախում բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները: Այս ուղղությամբ արձանագրվել են մի շարք կարևոր ձեռքբերումներ, որոնցից են

1.Յայաստանի և Արցախի բարձրագույն կրթության համակարգում սկսած 1991 թվականից, կատարվեցին աստիճանական փոփոխություններ, մի շարք բուհերի շնորհվեց համալսարանական կարգավիճակ, ներդրվեց վճարովի ուսուցման համակարգը, ձևավորվեցին ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ: Պետությունն աջակցեց միջանական ծրագրով նոր բուհերի ստեղծմանը:

2.Մինչև բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում բարեփոխումներին կտրվեր պետական մոտեցում, Յայաստանի մի քանի բուհեր՝ ԵՊՃ, ՃՊՃ, կատարեցին որոշակի փոփոխություններ: Այսպես, օրինակ, ԵՊՃ-ն նշակեց բարեփոխման ռազմավարություն և վերափոխման արաջին փուլն ընդգրկեց 1992-1999 թվականները՝ անվանելով համալսարանի ինքնապահապաննամ և ինքնահաստատման փուլ:

3.Բարձրագույն կրթության ոլորտում համաշխարհային ընկերակցության մեջ ինտեգրվելու խնդիրը նույնպես ազդեց փոփոխություններ կատարելու գործընթացի վրա: Պարզ է, որ այդ ժամանակ չկար Բոլորնամ գործընթաց, այլ կար ժամանակի պահանջ, այն է բարեփոխում բովանդակության մեջ և կառավարման համակարգում: Դրանք պետք է այնպես իրականացվեին, որ նորի հետ մեկտեղ պահպանվեր նաև ավանդականը:

4. Ներդրվեց կրթության եռաստիճան կրթական համակարգը, Յայաստանում 1992թ-ից ՃՊՃ-ն, այնուհետև ԵՊՃ-ն 1995-1996 ուսուարվանից անցան եռաստիճան համակարգի հսկ Արցախի բուհերում բակալավրի, մագիստրոսի և գիտական հետազոտողի(հետրուհական մասնագիտական կրթության) կրթական ծրագրերի:

5.2001 թվականին ընդունվեց բարձրագույն կրթության համակարգված նպատակային բարեփոխումների ծրագիր՝ Կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագրը: Այս ժամանակահատվածում Յայաստանի և Արցախի բուհերն անցան եռաստիճան կրթական համակարգի:

6.Տեղի ունեցավ բուհերի կառավարման ապակենտրոնացում, բուհին տրվեց ինքնավորություն: Սա նշանակում է կառավարման գործառույթների վերաբաշխում նախ պետության և բուհի, ապա վերջինիս ղեկավար մարմինների և կառուցվածքային ստորաբաժնումների միջև:

7.Փոխվեց բարձրագույն ուսումնական հաստատության ընդունելության կարգը՝ 2007թ-ից բուհերի ընդունելության քննությունները միավորվեցին:

8.2005թ-ին Յայաստանը ներդրավեց բարձրագույն կրթության Եվրոպական տարածք (ԵԲԿՏ) միանալով Բոլորնամ գործընթացին, նպաստեց կատարելու համակարգված բարեփոխումներ, փոխվեց ուսուցման գործընթացի կազմակերպման ծևը (ակադեմիական կրեդիտների միջոցով չափվում է ուսանողի լրիվ ծանրաբեռնվածության չափը):

9.Փոխվել է նաև գնահատման համակարգը: Ենիշտ է, Բոլորնամ գործընթացի անմիջական պահանջներից չէին գնահատման համակարգի փոփոխությունները, սակայն դա պայմանավորված էր տեղի ունեցող մի շարք փոփոխություններով, որոնց պետք է համապատասխանեցվեր նաև գիտելիքների գնահատման համակարգը:

10.Ուսուցման գործընթացում նոր երևոյթ է նաև ուսանողի վարկանիշային միավոր (ՎՄ) և միջին որակական գնահատականը (ՄՊԳ): Այս երկուսը նպաստում են կրթության որակի բարձրացմանը և այլն:

Այսպիսով՝ բարձրագույն կրթության համակարգի վերափոխումը պայմանավոր-

## **ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019**

ված էր երկու համագամանքով համակարգային խորհրդային համակարգի թերությունների վերացում և արտահամակարգային կրթությանը ներկայացվող նոր պահանջների բավարարում: Եվ վերջապես, չկար այն հասարակական, սոցիալ-տնտեսական հիմքը, որին համապատասխանեցվել էր կրթությունը: **Պատահական չեին Յայաստանի անկախացումից հետո կրթական համակարգում տեղի ունեցող զգալի փոփոխությունները՝ նոր օրենքներ, նորմատիվային ակտեր, որոնք փոխեցին կրթական համակարգի վարչարությունը:**

Դրա հետ մեկտեղ երկար ժամանակ բարձրագույն մասնագիտական կրթության դաշտում չկար հստակ մշակված միասնական քաղաքականություն: Բարձրագույն կրթության ոլորտում կատարված և կատարվող բարեփոխումների գերնպատակը կրթության որակի ապահովումն ու բարեկավումն է, կրթական ծրագրերը դարձնել ծկուն, ժամանակի հետ համընթաց, ճանաչելի այլ երկրներում և վերջապես համապատասխանեցնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աշխատաշուկայի պահանջներին: Յետևաբար, Յայաստանի և Արցախի բուհերում կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում առավել ուշադրություն դարձվեց նաև բուհերի ուսումնական գործընթացի կազմակերպմանը կրեղիտային համակարգով:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր, 2011, էջ 37:
2. Սալցբուրգ  
2005:1//[http://www.eua.be/jsp/en/upload/Salzburg\\_Report\\_final.1129817011146.pdf](http://www.eua.be/jsp/en/upload/Salzburg_Report_final.1129817011146.pdf)  
f, 08.11.2012:
3. Բուլղարիա, Կարաբեկյան, Աշվ.աշխ. նույն տեղում:
4. (Տեղեկանք՝ ՀՀ բուհերում բարեփոխումների ընթացքի և Բոլոնիայի սկզբունքների իրագործման վերաբերյալ, 2010:1)
5. Տե՛ս ԱրԴՅ տեղեկագիր, 2002, թիվ 1-2, էջ 2-4:
6. Այդ մասին տե՛ս Յու. Սարգսյան, Ա. Բուլղարիան, Բոլոնիայի գործընթացը Յայատանում /ուղեցույց/, Երևան, 2007:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Երկաստիճան, եռաստիճան կրթական համակարգի բարեփոխման խնդիրները  
ԼՂՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում (պետական և ոչ  
պետական բուհերի վերլուծության օրինակով)  
Արպատ Ավանեսյան, Գրիշա Յարությունյան**

Արցախը (ԼՂՀ) անկախություն ձեռք բերելուց առաջ ուներ խորհրդային ժամանակներից ժառանգություն ստացած մի կրթահամակարգ, որը, բավական դրական արժեքներով օժտված լինելով հանդերձ, այնուամենայնիվ դուրս էր մնացել եվրոպական օրորի զարգացող կրթության տարածքից: Անկախություն ձեռք բերելուց այն ամբողջությամբ ներառվեց ՀՀ կրթական համակարգի մեջ, և նրա հետագա զարգացումը ընթացավ ՀՀ կրթահամակարգի զարգացմանը համաժամ:

Սկսած 2002թ.-ից՝ Արցախի պետական համալսարանում գործում է եռաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) կրթական համակարգ, իսկ պետհավատարմագրված բուհերում՝ «Գրգոր Նարեկացի» և «Մեսրոպ Մաշտոց» համալսարաններում՝ երկաստիճան:

Յայաստանի կրթական համակարգի ներգրավումը ԵԲԿՏ(Եվրոպական բարձրագույն կրթության տարածք) ռազմավարական խնդիրների իրականացման, որակավորումների փոխանակման ու միջազգային շարժունակության ապահովման գործընթացնե-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԼՐԱՑՈՒ 2019

բուն գգալիորեն օժանդակում է Հայաստանի և Արցախի կրթական համակարգերի մրցունակության և արտասահմանցի ուսանողների ներհոսքի խթանման գործին:

### РЕЗЮМЕ

#### **Задачи реформирования двухступенчатой и трехступенчатой образовательной системы в высших учебных заведениях НКР (на примере государственных и негосударственных вузов)**

**Арпат Аванесян, Гриша Арутюнян**

**Ключевые слова:** двухступенчатая и трехступенчатая образовательная система, декларация, европейское пространство высшего образования, профессиональная и общественная деятельность, непрерывное образование.

Перед провозглашением независимости в Арцахе (НКР) действовала советская образовательная система, которая, имея достаточно преимуществ, находилась вне развивающегося изо дня в день европейского образовательного пространства. После провозглашения независимости она была включена в образовательную систему РА, и ее дальнейшее развитие проходило одновременно с развитием образовательной системы РА.

Начиная с 2002 года, в Арцахском государственном университете действует трехступенчатая (бакалавриат, магистратура, аспирантура) образовательная система, а в аккредитованных государственных вузах – университетах «Григор Нарекаци» и «Месроп Маштоц» – двухступенчатая.

Участие образовательной системы Армении в процессах осуществления стратегических задач, взаимного признания квалификаций и обеспечения международной мобильности в европейском пространстве высшего образования оказывает существенное содействие делу повышения конкурентоспособности образовательных систем Армении и Арцаха и привлечения зарубежных студентов.

### SUMMARY

#### **Issues of two-level and three-level education system reform in higher education institutions of the NKR (based on the analysis of state and non-state higher education institutions)**

**Arpat Avanesyan, Grisha Harutyunyan**

**Keywords:** two-level, three-level education system, declaration, European higher education area, professional and public activity, continuous education.

Before gaining independence, Artsakh (NKR) had the educational system inherited from the Soviet era, which, despite its rather positive values, was left out of the developing European education area. Since independence, it has been fully integrated into the Armenian education system and its further development took place simultaneously with the development of the Armenian education system.

Starting from 2002 there has been a three-level (bachelor's, master's, post-graduate) education system operating in the Artsakh State University, whereas at the state-accredited "Grigor Narekatsi" University and "Mesrop Mashtots University" there has been a two-level system.

The involvement of the Armenian education system in the European Higher Education Area's processes of implementing strategic issues, mutual recognition of qualifications and ensuring international mobility significantly contributes to the competitiveness of education systems in Armenia and Artsakh and the promotion of foreign students' inflow.